Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

342.4
Ч-88

12. Կ
–83
01 MAR 2010
05 FEB 2007

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՄՏՑՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

### ՀԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 4.—

ա. Վերացված է հայաստանում հողի մասնավոր սեփականությունը Հ. Ս. Խ. Հ. սահմաններում, արտագրավում և պետական սեփականություն է ճանաչվում ամբողջ հողը բոլոր ջրերով ու անտառներով և կալվածատիրական ու կրոնական հաստատությունների շարժական ու անշարժ գույքը և ձրիաբար մշակելու համար տալիս աշխատավորներին, նրանց կոլեկտիվներին ու խորհրդային տնտեսություններին։

Հոդ. 6 — Աշխատավորների քաղաքացիական դաստիարակության, մտավոր—բարոյական ազատագրության և դասակարգային կազմակերպության նպատակով...

Հոդված 7—ից հետո մըտցված է յերկու նոր հոդված։

### ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 4—ի ա. կետը բաժանված է յերկու մասի.

ա. Վերացված է հայաստանում հողի մասնավոր սեփականությունը Հ. Ս. Խ. Հ. սահմաններում և պետական սեփականություն է ճանաչվում ամբողջ հողը բոլոր ջրերով, անտառներով և ընդերքով.

բ. Արտագրավում է կալվածատերերի ու կրոնական հաստատությունների շարժական և անշարժ գույքը և մշակելու համար տալիս աշխատավորներին, նրանց կոլեկտիվներին և Խորհրդային տնտեսություններին։

Հոդ. 6 — Աշխատավորների քաղաքական դաստիարակության, մտավոր—բարոյական ազատագրության և դասակարգային կազմակերպության նպատակով։

Նոր հոդ. 8 — Հ. Ս. Խ. Հ. ընդունելով քաղաքացիների իրավունքների հավասարությունը՝ առանց ցեղի և ազգության խտրության, Հանրապետության հիմնական օրենքներին հակառակ է համարում այդ հիման վրա վորևէ առանձնաշնորհություն կամ առավելության սահմանելը կամ թույ-

28 AUG 2013

տալը, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների վորևե ճնշում կամ նրանց իրավահավասարության սահմանափակում։

Նոր հոդ. 9 — Ղեկավարվելով բանվոր դասակարգի շահերովն ընդհանուր առմամբ, Հայաստանի Ս. Խ. Հանրապետությունը զրկում է զատ-զատ անձանց, խմբերին այն իրավունքներից, վոր նրանք վայելում են ի վնաս Սոցիալիստական Հանրապետության շահերին։

Հատված 1-ից հետո Սահմանադրության մեջ մտցրված է նոր հատված ըստ կարգի յերկրորդ։

## ՀԱՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

Հ. Ս. Խ. Հ.- Անդրկովկասյան Ս. Ֆ. Խ. Հանրապետության կազմի մեջ և Ս. Խ. Հ. Միության մեջ մտնելու մասին։

Նոր հոդ. 14. — Կապիտալիստական ողակի հանդեպ մի Խորհրդային ճակատ ստեղծելու և բոլոր Խորհրդային Հանրապետությունների հետ սերտ յեղբայրական աշխատակցության հիման վրա Սոցիալիստական շինարարությունը և ազգային զարգացման ազատությունը ապահովելու նպատակով Հայաստանի Ս. Խ. Հանրապետությունը Վրաստանի Ս. Խ. Հանրապետության և Ադրբեջանի Ս. Խ. Հանրապետության հետ կազմում է Անդրկովկասյան Ս. Ֆ. Խ. Հանրապետություն, իսկ վերջինիս միջոցով վորպես նրա իրավահավասար մաս՝ միանում է ՌՍՖԽՀ, ԲՍԽՀ և ՈՒ.Ս.Խ.Հ. հետ և կազմում մի միացյալ Պետություն—Ս. Խ. Հ. ՄԻՈՒԹՅՈՒՆ։

342.4
Փ-88

## ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

Հ. Ս. Խ. Հ. Գերիշխանական իրավունքների, Միութենական քաղաքացիության և Հ.Ս. Խ. Հ. պետական լեզվի մասին։

Նոր հոդ. 15. — Հ. Ս. Խ. Հ. գերիշխանությունը սահմանափակված է միայն Անդրկովկասյան Ս. Ֆ. Խ. Հանրապետության «Հիմնական Օրենքում» (Սահմանադրություն) և ՀՍԽՀ Միության «Հիմնական Օրենքում» (Սահմանադրություն) մատնանշված սահմաններում և միայն Անդրկովկասյան Ս. Ֆ. Խ. Հանրապետության և Ս. Խ. Հ. Միության իրավասության վերաբերյալ խնդիրների նկատմամբ։

Այս սահմաններից դուրս Հայաստանի Ս. Խ. Հանրապետությունն յուր պետական Իշխանությունն իրականացնում է ինքնորինաբար։

Անդրկովկասյան Ս. Ֆ. Խ. Հանրապետությունը և Ս. Խ. Հ. Միությունը պահպանում են Հայաստանի Ս.Խ. Հանրապետության գերիշխանական իրավունքները։

33846
7/II 1922

Նոր հոդ. 16. — Հայաստանի Ս. Խ. Հանրապետությունն իրեն իրավունք է վերապահում ազատ դուրս գալու Անդրկովկասյան Ս. Ֆ. Խ. Հանրապետության կազմից, նույնպես և Ս. Խ. Հ. Միությունից։

Նոր հոդ. 17. — Հայաստանի Ս. Խ. Հանրապետության սահմանները չեն կարող փոփոխման յենթարկվել առանց յուր համաձայնության։

Նոր հոդ. 18. — Հ. Ս. Խ. Հ. քաղաքացիների համար Միութենական

## ՀԱՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ
## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Հայաստանի խորհուրդների Համագումարի և Կենտրոնական Գործադիր Կոմիտեի իրավասությունը։

Հոդ. 37 — Հայաստանի խորհուրդների Համագումարի և Կենտրոնական Գործադիր Կոմիտեի իրավասության են յենթարկվում հետևյալ հարցերը․ . .

բ. Արտաքին և ներքին քաղաքականության ընդհանուր ղեկավարությունը.

միասնական քաղաքացիություն և սահմանվում։

Հայաստանի Ս. Խ. Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի ինքնըստինքյան Անդրկովկասյան Ս. Ֆ. Խ. Հանրապետության և Ս. Խ. Հ. Միության քաղաքացի յե։

Նոր հոդ. 19. — Հայաստանի Ս. Խ. Հանրապետության պետական լեզուն հայերենն է։

Նոր հոդ. 20. — Հայաստանի Ս. Խ. Հանրապետության ազգային փոքրամասնություններն ազգային կուլտուրայի ազատ զարգացման և իրենց մայրենի լեզուն գործ ածելու իրավունք են վայելում՝ համաձայն աշխատավոր ժողովրդի Իշխանության հիմնական սկզբունքներին։

## ՀԱՏՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ
## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Հ. Ս. Խ. Հանրապետության Իշխանության Գերագույն մարմինների իրավասությունն.

Նոր հոդ. 21. — Հայաստանի Ս. Խ. Հանրապետության՝ հանձին յուր Գերագույն Մարմինների, այն է՝ Բանվորների, Գյուղացիների և Կարմիր Զինվորների Պատգամավորական Խորհուրդների Համագումարի և Կենտրոնական Գործադիր Կոմիտեի իրավասության յենթակա յեն՝.....

բ. Ներքին քաղաքականության ընդհանուր ղեկավարությունը։



գ. Հանրապետության սահմանների վորշումն ու փոփոխումն; այլ և դրա մասերի, ինչպես և Հանրապետության պատկանող իրավունքների ոտարացումը։

դ. Հանրապետության ընդհանուր վարչական բաժանումը.

յե. Չափերի, կշռի և դրամական սիստեմների սահմանումն ու փոփոխումն։

զ. Ոտար պետությունների հետ հարաբերությունները վարելը, պատերազմ հայտարարելն ու խաղաղության դաշինք կնքելը։

է. Փոխառություններ, մաքսի, առևտրի և ֆինանսական համաձայնագրեր կնքելը

ը. Ժողովրդական տնտեսության և նրա առանձին ճյուղերի հիմունքների ընդհանուր ծրագրի սահմանումը։

գ. Հ. Ս. Խ. Հանրապետության կազմի մեջ այլ Հանրապետություններ ընդունելը, Հանրապետության սահմանների վորոշումն ու փոփոխումն, այլ և նրա մասերի, նայև Հանրապետության պատկանող իրավունքների ոտարացումը։

դ. Հանրապետության ընդհանուր վարչական բաժանումը և վարչական միավորների ներքին վերաբաժանումները։

յե. Դուրս է հանված։

զ. Դուրս է հանված։

է. Դուրս է հանված։

յե. Ա. Ս. Ֆ. Խ. Հ. և Ս. Խ. Հ. Միության Իշխանության Գերագույն մարմինների սահմանած Միութենական ժողովրդական տնտեսության հիմունքների և ծրագրի իրագործումը Հայաստանի Ս. Խ. Հանրապետության սահմաններում։

Հայաստանի Ս. Խ. Հանրապետության ժողովրդական տնտեսության ընդհանուր ծրագիր սահմանելը։

Նոր կետ զ. Ս. Խ. Հ. Մ-ի կողմից Հայաստանի անունից վերջինիս սահմաններում գտնվող ձեռնարկությունների վերաբերյալ կնքվելիք կոն-

| | |
|---|---|
| | ցեսիոն պայմանագրերի նախնական քննությունը։ Հանրապետական նշանակություն ունեցող կենցեսյոն պայմանագրերի հաստատությունը։ |
| | Այս կետը բաժանված է յերկու մասի.— |
| Թ. Բուջեի և հարկերի ու տուրքերի սահմանումը։ | Ը. Հ. Ս. Խ. Հ. բյուջեի սահմանումը. |
| | Թ. Միութենական և ֆեդերատիվ Օրենսդրության համաձայն հարկեր և տուրքեր սահմանելը։ |
| ժ. Ժողովրդական Կոմիսարների և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, այլ և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի նշանակումն ու փոփոխումը։ | ժ. Այս կետը հանված է 4-րդ Գլխից և մտցրված 7-րդ Գլխի մեջ «Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահություն»։ |
| ժա. Զինված ուժերի կազմակերպության հիմունքների սահմանումը։ | ժա. Դուրս է հանված. |
| ժբ. Համապետական ընդհանուր օրենսդրությունը, դատաստանական—քաղաքացիական, քրեական և այլն։ | ժ. Դատարանակազմության և դատավարության Օրենսգրքերի, այլ և Միութենական Օրենսդրության հիման վրա Քաղաքացիական և Քրեական Օրենսդրության սահմանումը։ |
| ժգ. Հ.Ս.Խ.Հ. քաղաքացիության իրավունք ձեռք բերելու և այդ իրավունքներից զրկվելու, այլև օտարյերկրացիների իրավունքների մասին ընդհանուր վորոշումներ անելը։ | ժա. Միութենական Օրենսդրության հիման վրա քաղաքացիության իրավունք տալը և այդ իրավունքից զրկելը, այլ այդ առթիվ վորոշումներ հրատարակելը Հ. Ս. Խ. Հանրապետության սահմաններում։ |
| ժդ. Ընդհանուր և մասնակի ներումներ։ | ժբ. Ընդհանուր և մասնակի ներումներ Հ. Ս. Խ. Հ. սահմաններում, այլ |



և Հ. Ս. Խ. Հ. դատական և վարչական մարմինների կողմից դատապարտված քաղաքացիներին ներում շնորհելու և նախկին վիճակի մեջ հաստատելը։

ժգ. կետ— Հ. Ս. Խ. Հ. վիճակագրության կազմակերպությունը։

Նոր կետ ժդ.—ԱՍՖԽՀ և ՍԽՀՄ Իշխանության գերագույն մարմինների թույլտվությամբ արտաքին և ներքին փոխառություն կնքելը.

Նոր կետ ժյե.—Միութենական և Ֆեդերատիվ ընդհանուր սկզբունքների հիման վրա Օրենսդրություն՝ հողաշինարարության, հողօգտագործման և ՀՍԽՀ ամբողջ սահմաններում անտառների, ջրերի և ընդերքի օգտագործման վերաբերյալ։

ժզ. ՀՍԽՀ սահմաններում ժողովրդական լուսավորության և ժողովրդական առողջապահության սկզբունքներ և ընդհանուր ծրագիր սահմանելը։

ժե. Միութենական և Ֆեդերատիվ հիմնական օրենքների հիման վրա Օրենսդրություն՝ Աշխատանքի վերաբերյալ։

ժը. Իշխանության Հանրապետական բոլոր մարմինների սույն Սահմանադրությունը խախտող վորոշումների վերացումը և ԱՍՖԽՀ և ՍԽՀՄ Ժողկոմխորհի Դեկրետների և վորոշումների դեմ Անդրկենտգործկոմի Նախագահությանը բողոք տալը։

## ՀԱՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

Խորհրդային իշխանության կառուցվածքը

### ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

Կենտրոնական իշխանություն

ա. Հայաստանի Բանվորների, Գյուղացիների և Կարմիր զինվորների Պատգամավորական Խորհուրդների Համագումարը:

Հոդ. 12—ՀՍԽՀ Բարձրագույն Իշխանությունը հանդիսանում է Հայաստանի Բանվորների, Գյուղացիների և Կարմիր Զինվորների Պատգամավորական Խորհուրդների Համագումարը:

Հոդ. 13 — Հայաստանի Խորհուրդների Համագումարը կազմում են խորհուրդների գավառական Համագումարներից ընտրված պատգամավորները, ըստ վորում 5000 բնակիչ տալիս է մի ներկայացուցիչ, սակայն համագումարի ամբողջ կազմը լինելու չէ վոչ ավելի, քան 300 հոգի:

Հոդ. 15 — Հայաստանի Խորհուրդների արտակարգ Համագումար հրավիրվում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեն իր անմիջական նախաձեռնությամբ և կամ Հանրապետության մեկ հինգեր-

### ԳԼՈՒԽ 5-ՐԴ

Խորհրդային Իշխանության կառուցվածքը

Հայաստանի Բանվորների, Գյուղացիների և Կարմիր զինվորների Պատգամավորական Խորհուրդների Համագումար:

Հոդ. 23.—ՀՍԽ Հանրապետության Իշխանության Գերագույն մարմինն է՝ Հայաստանի Բանվորների, Գյուղացիների և Կարմիր Զինվորների Պատգամավորական Խորհուրդների Համագումարը, իսկ Խորհուրդների միջանկյալ ժամանակաշրջանում՝ ՀՍԽՀ Կենտգործկոմը:

Հոդ. 24 —ՀՍԽՀ Խորհուրդների Համագումարը կազմվում է քաղաքային Խորհուրդների և քաղաքատիպ բնակավայրերի Խորհուրդների ներկայացուցիչներից՝ 1000 ընտրողին մի պատգամավոր և Խորհուրդների գավառական համագումարների ներկայացուցիչներից՝ 3000 բնակիչներին մի պատգամավորի հաշվով:

Հայաստանի Խորհուրդների Համագումարի Պատգամավորներն ընտրվում են Խորհուրդների գավառական համագումարներում:

Հոդ. 26.—Հայաստանի Խորհուրդների արտակարգ Համագումար հրավիրվում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն յուր վորոշմամբ և կամ Հանրապետության ազգաբնակության մեկ հինգյերորդից վոչ պակաս մասն ընդգրկող վայրերի գա-



րորդից վոչ պակաս մասն ընդգրկող վայրերի գավառական Խորհուրդների պահանջով:

Հոդ. 16—Հայաստանի Խորհուրդների Համագումարն ընտրում է ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտե վոչ պակաս, քան 75 անդամով, վորը պատասխանատու և հաշվետու յէ Հայաստանի Խորհուրդների Համագումարի առաջ:

## ՀԱՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

### ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

բ. Կենտրոնական Գործադիր Կոմիտե.

Հոդ. 17—Հայաստանի Խորհուրդների մի համագումարից մինչև մյուսը Կենտրոնական Գործադիր Կոմիտեն հանդիսանում է ՀՍԽՀ Օրենսդիր, կարգադիր և ղեկավար-վերահսկողական Բարձրագույն Իշխանությունը.

վառական Խորհուրդների պահանջով:

Նոր Հոդ. 27.—ՀՍԽՀ Խորհուրդների համագումարը հրավիրելու արգելառիթ արտակարգ հանգամանքներում ՀՍԽՀ Կենտգործկոմին իրավունք է վերապահվում հետաձգելու Խորհուրդների Համագումարը:

Հոդ. 16. Դուրս է հանված և նոր խմբագրությամ մտցրված Գլուխ 6-րդի մեջ «Կենտրոնական Գործադիր Կոմիտե»:

### ԳԼՈՒԽ 6—ՐԴ

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտե

Այս հոդված բաժանված է յերկու մասի.

Հոդ. 28—Խորհուրդների համագումարների միջանկյալ ժամանակաշրջանում ՀՍԽՀ Իշխանության Գերագույն մարմինն է Հայաստանի Բանվորների, Գյուղացիների և Կարմիր Զինվորների Պատգամավորական Խորհուրդների համագումարի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն:

Նոր հոդ. 29—ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն Գերագույն Օրենսդիր, Տնորեն և Վերահսկիչ մարմին է:

## ՀԱՎՏԱԾ ՑԵՐԿՐՈՐԴ,
## ԳԼՈՒԽ Չ-ՐԴ Ա. ԿՆՏ

Հոդ. 16—Հայաստանի Խորհուրդների Համագումարը ընտրում է ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտե վոչ պակաս քան 75 անդամով, վորը և պատասխանատու և հաշվետու յե Հայաստանի Խորհուրդների Համագումարի առաջ։

Հոդ. 18— Համապետական քաղաքական և սոցիալական հարցերը սահմանավորող դեկրետների ու վորոշումների նախագծերը, այլև ռազմական ու արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրները քննության են առնվում և հաստատվում Կենտրոնական Գործադիր Կոմիտեում։

Այս հոդվածը, վոր փոխադրված է հին խմբագրության յերկրորդ գլխից բաժանված է յերկու մասի.

Հոդ. 30—ՀՍԽՀ Կենտրոնական գործադիր Կոմիտեն, վոր բաղկացած է 75 անդամից և 37 փոխանդամից ընտրվում է ՀՍԽՀ Խորհուրդների համագումարի կողմից։

Հոդ 31—Կենտրոնական Գործադիր Կոմիտեն բոլոր ամենայնի պատասխանատու յե ՀՍԽՀ Խորհուրդների համագումարի առաջ։

Հոդ. 18—Դուրս է հանված.

Նոր Հոդ. 32.—Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ՀՍԽՀ Բանվորա-Գյուղացիական Կառավարության գործունեության ընդհանուր ուղղությունն է տալիս և վորոշում է ՀՍԽՀ Կենտգործկոմի Նախագահության և Ժողկոմխորհի գործունեության շրջանակը։

Նոր Հոդ. 33.—Կենտրոնական Գործադիր Կոմիտեն հրատարակում է դեկրետներ, կարգադրություններ. հետևվում է, վոր գործադրվեն Հայաստանի ՍԽ Հանրապետության, այլ և



Հոդ. 19 — Կենտրոնական Գործադիր Կոմիտեն իր Նախագահության միջոցով չորս ամիսը մի անգամ հրավիրում հերթական նստաշրջանի։

Հոդ. 20 — Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի արտակարգ նստաշրջան հրավիրում է Նախագահությունը իր անմիջական նախաձեռնությամբ, կամ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի առաջարկությամբ և կամ թե Կենտրոնական Գործադիր Կո-

ԱՍՖԽՀ և ՍԽՀՄ Սահմանադրությունները և ՀՍԽՀ, ԱՍՖԽՀ և ՍԽՀՄ Խորհուրդների համագումարների և Կենտրոնական Գործադիր Կոմիտեների բոլոր վորոշումները ՀՍԽ Հանրապետության սահմաններում։

Հոդ. 34.—ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն քննում և հաստատում է Կենտգործկոմի Նախագահության և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, այլ և Ժողկոմատներին հավասարեցրած այլ մարմիններից առաջվող դեկրետների և վորոշումների նախագծերը և այլ յենթադրությունները։

Նոր Հոդ. 35.—ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի, նրա Նախագահության և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի դեկրետները, վորոշումները և կարգադրությունները հրատարակվում են հայերեն, ռուսերեն և թուրքերեն լեզուներով։

Հոդ. 36.—Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նստաշրջանները գումարում է Կենտգործկոմի Նախագահությունը տարեկան յերեք անգամ։

Հոդ. 37.—Կենտգործկոմի արտակարգ նստաշրջանները գումարվում են Կենտգործկոմի Նախագահության վորոշմամբ կամ Կենտգործկոմի անդամների մեկ յերրորդի պահանջմամբ։

միտեյի անդամների վոչ պակաս կեսի պահանջով։

Հոդ. 21 — Կենտրոնական Գործադիր Կոմիտեն հրավիրելով Հայաստանի Խորհուրդների Համագումար, տալիս է նրան իր գործունեյության հաշիվը և զեկուցումներ ներկայացնում ընդհանուր քաղաքականության և առանձին հարցերի մասին։

Հոդ. 22. — Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի բոլոր անդամներն աշխատում են կառավարական հիմնարկություններում, կատարում են ընդհանրապես խորհրդային պաշտոն կենտրոնում կամ տեղերում։

Հոդ. 23. — Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի անդամներին պատասխանատվության յենթարկել, նրանց մոտ խուզարկություն կատարել և նրանց ձերբակալել կարելի յե միայն Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կանխական համաձայնությամբ։

Հոդ. 24 — Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ընտրում է Նախագահություն և Հանրապետության գործերի ընդհանուր ղեկավարության համար կազմում Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ։

Հոդ. 38 Կենտրոնական Գործադիր Կոմիտեն յուր գործենության տեղեկագիրը և ընդհանուր քաղաքականության ու առանձին խնդիրների վերաբերյալ զեկուցումներ ներկայացնում է ՀՍԽՀ Հանրապետության Բանվորների, Գյուղացիների և Կարմիր Զինվորների Պատգամավորական Խորհրդների համագումարին։

Հոդ. 22 Դուրս է հանված։

Հոդ.23— Դուրս է հանված։

Հոդ. 39—Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ընտրում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահություն բաղկացած՝ 11 անդամից (վորոնց թվում՝ Նախագահ, Նախագահի Տեղակալ, մի Քարտուղար) և 4 փոխանդամից։



ՀԱՏՎԱԾ 2-ՐԴ

ԳԼՈՒԽ 4-ՐԴ

Հոդ. 37 կետ ժ. Ժողովրդական Կոմիսարների և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, այլ և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի նշանակումն ու փոփոխումն։

ՀԱՏՎԱԾ 2-ՐԴ

ԳԼՈՒԽ 5-ՐԴ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահության իրավասությունը։

Նոր հոդ. 40 ՀՍԽՀ Կենգործկոմի նիստերում բոլոր խնդիրները վճռվում են բաց քվեարկությամբ ձայների պարզ մեծամասնությամբ։ Անուն անուն քվեարկություն տեղի յե ունենում Կենտգործկոմի վոչ պակաս քան 10 անդամի գրավոր հայտարարության հիման վրա։

Այս հոդվածը փոխադրված է հանված յերկրորդից Գլուխ 4-րդից և խմբագրված այսպես՝

Հոդ. 41—Հայաստանի Ս.Խ. Հանրապետության Կառավարչական գործերի ընդհանուր ղեկավարության համար Կենտգործկոմը կազմում է Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ, այլ և կառավարչության առանձին ճյուղերը ղեկավարելու համար հիմնում է առանձին Ժողովրդական Կոմիսարիատներ ու այլ մարմիններ։

Հ.Ս.Խ.Հ. Կենտգործկոմը նշանակում և արձակում է պաշտոնից թե Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի առանձին անդամներին և թե Ժողովրդական Կոմիսարների ամբողջ կազմը, այլ և նշանակում է ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ և Նախագահի տեղակալ։

ԳԼՈՒԽ 7—ՐԴ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահություն.

| | |
|---|---|
| Հոդ. 39.— Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը՝ | Հոդ. 42—Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նստաշրջանների միջանկյալ ժամանակաշրջանում Կենտգործկոմի Նախագահությունը հանդիսանում է ՀՍԽՀ Իշխանության Բարձրագույն Օրենսդրական, Գործադիր և Տնօրեն մարմինը։ |
| ա. Ղեկավարում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նիստերը։ | ա. Դուրս է հանված. |
| բ. Նյութեր է նախապատրաստում Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նիստերի համար։ | բ. Դուրս է հանված. |
| գ. Վերահսկում է Օրենքների կատարումն և Խորհրդային իշխանության հիմնարկների գործունեությունը։ | Հոդ. 43. — Կենտգործկոմի Նախագահությունը հետեվում է, որ Իշխանության բոլոր մարմինները կյանքի մեջ կիրառեն ՀՍԽՀ, ԱՍՖԽՀ և ՍԽՀՄ Սահմանադրությունները և ի կատար ածեն Հայաստանի, Ս. Խ. Հ. Անդրֆեդերեցիայի և ՍԽՀՄ Խորհուրդների համագումարների բոլոր վորոշումները։ |
| դ. Լուծում է տալիս ինչպես Կենտրոնական Իշխանության, նույնպես և կենտրոնական ու գավառական Իշխանությունների մեջ ծագաց վեճերին։ | Հոդ. 44.—Կենտգործկոմի Նախագահությունը լուծումն է տալիս ինչպես կենտրոնական, նույնպես կենտրոնական ու գավառական Իշխանությունների մեջ ծագած վեճերին։ |
| յե. Քննության է առնում ներում շնորհելու, Կարմիր Դրոշակի ռազմանշանով պարգևատրելու, այլև Բարձրագույն կառավարականության կարգով վորոշում պահանջող խնդիրները։ | Հոդ. 45.—Քննության է առնում ներում շնորհելու, Կարմիր Դրոշակի նշանով պարգևատրելու խնդիրները և ռազմապարգևատրում է Աշխատանքի Դրոշակի շքանշանով։ |
| զ. Վճիռ է տալիս Հանրա- | զ. Դուրս է հանված։ |



| | |
|---|---|
| պետության վարչական և տնտեսական վերաբաժանման նախագծերին։ | |
| է. Բեկանում է Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումները և կամ առկայում նրանց վերջնական լուծումը հանձնելով Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին։ | Հոդ. 46.—Հայաստանի Կենտգործկոմի Նախագահությունն իրավունք ունի կասեցնելու յեվ ջնջելու ՀՍԽՀ Ժողկոմխորհի և Ժողկոմատների վորոշումները։<br>Նոր հոդ. 47. Կենտգործկոմի Նախագահությունն իրավունք ունի ջնջելու Խորհուրդների գավառական համագումարների, գավառական Գործադիր Կոմիտեների վորոշումները։ |
| ը. Նշանակում և պաշտոնանկ է անում Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի առաջարկությամբ կամ անմիջականորեն Ժողովրդական Կոմիսարներին։ | Հոդ. 48.—Նշանակում և պաշտոնանկ է անում Ժողովրդական Կոմիսարներին և նրանց տեղակալներին, մացնելով հարցը Կենտգործկոմի մոտագա նստաշրջանի հաստատման։ |
| թ. Ընդհանրապես հարաբերվում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի անունից և ի դեպ հարկի ընդունում նրա անունից համապատասխան վորոշումներ։ | թ. Դուրս է հանված։ |
| Հոդ. 40.— Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կից կազմակերպվում են բյուդջետային, իրավաբանական և այլ հանձնաժողովներ, վորոնց կազմի և իրավասության հարցերը վորոշվում են Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հատուկ հրահանգներով։ | Հոդ. 40.—դուրս է հանված։ |

## ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ.

Հոդ. 25 — Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի իրավասությանն է յենթակա ՀՍԽՀ գործերի ընդհանուր կառավարությունը և ընթացիկ Օրենսդրությունը։

Նոր հոդ. 50.—Կենտգործկոմի Նախագահությունը հրատարակում է դեկրետներ, վորոշումներ և կարգադրություններ և հաստատում ՀՍԽՀ Ժողկոմխորհի, ժողկոմատների Իշխանության Պետական այլ մարմինների և Կենտգործկոմի անդամների ներկայացրած դեկրետների և վորոշումների նախագծերը։

Նոր հոդ. 51.—ՀՍԽՀ Կենտգործկոմը և Կենտգործկոմի Նախագահությունը բողոքներ է տալիս ԱՍՖԽՀ Ժողկոմխորհի դեկրետների և վորոշումների դեմ Անդրկենտգործկոմի Նախագայության, առանց կասեցնելու նրանց կատարումը։

## ԳԼՈՒԽ 8—ՐԴ

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ։

Հոդ. 52 Ժողկոմխորհուրդը Հայաստանի Կենտգործկոմի գործադիր և կարգադրիչ մարմինն է։

Նոր հոդ. 53.—Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեն կազմում է Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ հետևյալ կազմով՝

Ժողկոմխորհի Նախագահ՝
Ժողկոմխորհի Նախագահի տեղակալ
Ժողանտխորհի Նախագահ
Հողագործության Ժողկոմ
Աշխատանքի »
Ներքին գործերի »



1007
33846

Հոդ. 26—Ժողկոմխորհն իր իրավասության սահմաններում հրատարակում է դեկրետներ, վորոշումներ, հրահանգներ և ընդհանրապես ձեռք է առնում բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պետական կյանքի կանոնավոր և արագ ընթացքը ապահովելու համար։

Հոդ. 27 — Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն իր բոլոր վորոշումների և վճիռների մասին անհապաղ տեղեկացնում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահության.

Հոդ. 28— Ժողկոմխորհրդի այն բոլոր դեկրետների և վորոշումների նախագծերը, վոր համապետական խոշոր նշանակություն և ընդհանուր քաղաքական կարևորություն

Արդարադատության »
Լուսավորության »
Առողջապահության »
Սոցապահովության »
Բանվորա-գյուղացիական
տեսչության Ժողկոմ,

այլ և խորհրդակցական կամ վճռական ձայնի իրավունքով Կենտգործկոմի Նախագահության վորոշմամբ Անդրներքառևտրի ժողկոմիսարի և Անդրֆինանսների ժողկոմիի լիազորները և Հայաստանի Արտակարգ Հանձնաժողովի Նախագահը։

Հոդ. 54.— ՀՍԽՀ Ժողկոմխորհը Հայաստանի Կենտգործկոմի կողմից վերապահած իրավունքների սահմաններում Հ. Ս. Խ. Հ Ժողկոմխորհի կանոնադրության հիման վրա հրատարակում է դեկրետներ և վորոշումներ, վոր պարտադիր է ՀՍԽՀ ամբողջ Հանրապետության սահմաններում։

Հոդ. 27 Դուրս է հանված։

Հոդ. 55.— Ժողկոմխորհի բոլոր այն դեկրետների և վորոշումների նախագծերը, վոր հանրապետական նշանակություն և ընդհանուր քաղաքական կարևորություն ունին, ներկայացվում են Կենտգործկոմի քննության և հաստատության,

ունին, ներկայացնում են Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քննության և հաստատության։

Հոդ. 29—Անհետաձգելի կատարումն պահանջող դեկրետներն ու վորոշումները կարող են ի կատար ածվել Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից անմիջապես։

Հոդ. 30. Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն իրավունք ունի բեկանել և առկայել Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ամեն մի դեկրետ և վորոշում։

Հոդ. 31— ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարներն են՝

Հոդ. 32 — Յուրաքանչյուր Ժողովրդական Կոմիսարիատին կից կազմվում է կոլեգիա, վորի անդամներին հաստատում Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը։

Հոդ. 33 — Ժողովրդական Կոմիսարն իրավասու յե միանձնյա վորոշել հարցերը և գործադրել, իսկ կոլեգիայի տարաձայնության դեպքում վեճը դրվում է Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի քննության։

Հոդ. 34 — Ժողովրդական կոմիսարները և նրանց կոլեգիաները պատասխանատու

Հոդ. 29— Դուրս է հանված։

Հոդ. 56— ՀՍԽՀ ժողկոմխորհի վորոշումներն ու կարգադրությունները կարող են կասեցնել և ջնջել Հայաստանի Կենտգործկոմը և Նրա Նախագահությունը։

Հոդ. 31 դուրս է հանված և մտցրված գլուխ 9-ի մեջ։

Հոդ. 32 դուրս է հանված և փոխադրված գլուխ 9-ը «Հ. Ս. Խ. Հ Ժողովրդական Կոմիսարիատների մասին»։

Հոդ. 33—Դուրս է հանված և փոխադրված գլուխ 9-ը «Հ. Ս. Խ. Հ. Ժողովրդական Կոմիսարիատների մասին»։

Այս հոդվածը բաժանված է յերկու մասի, վորից մեկը փոխադրված է գլուխ 9-ը «Հ. Ս. Խ. Հ. Ժողովր-



յեն Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի առաջ, իսկ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը—Հայաստանի Խորհուրդների համագումարի և Կենտգործկոմի։

Հոդ. 35—Բացի Հայաստանի Խորհուրդների համագումարից, Կենտրոնական Գործադիր Կոմիտեից և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդից—վոչ մի այլ հիմնարկ կամ պաշտոնյա իրավունք չունի որենք հրատարակելու։

դական Կոմիսարիատների մասին»։

Հոդ. 57.—ՀՍԽՀ Ժողկոմխորհը իր բոլոր գործունեյության համար պատասխանատու յե Հայաստանի Կենտգործկոմի և Նրա Նախագահության առաջ։

Հոդ. 35—Դուրս է հանված։

Նոր Հոդ. 58—Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը քննում է այն դեկրետների և վորոշումների նախագծերը, վոր ներկայացվում են թե ՀՍԽՀ ժողկոմատները և թե կոմիսարիատներին հավասարեցրված կենտրոնական այլ մարմինները, ինչպես նաև գավառական Գործադիր Կոմիտեները։

Նոր հոդ. 59 —ՀՍԽՀ ժողկոմխորհին առընթեր կազմվում է Տնտեսական Խորհուրդ, վորպես ուղղություն տվող —ՀՍԽՀ տնտեսական քաղաքականության և տնտեսական կոմիսարիատների և պետական այլ տնտեսական որգանների աշխատանքները դեկավարող մարմին։

ԳԼՈՒԽ 9-րդ

ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ։

Հոդ. 61 — ՀՍԽՀ Ժողովրդական Խորհրդի իրավասության շրջանակի մեջ մտնող կառավարության առանձին

ճյուղերի անմիջական ղեկավարության համար, կազմվում է 9 ժողովրդական կոմիսարիատ, վոր հիշատակված է Սահմանադրության 53 հոդ. մեջ և գործում են ժողովրդական կոմիսարիատների ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի հաստատված կանոնադրության հիման վրա։

Հոդ. 62— ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատները բաժանվում են՝

ա) Միացյալների, այն է՝

Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատ

Բանվորա-գյուղացիական Տեսչության Ժողովրդական Կոմիսարիատ

բ) Վոչ միացյալների, այն է՝

Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատ

Հողագործության Ժողովրդական Կոմսարիատ

Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատ

Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատ

Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատ

Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսարիատ

Ժողովրդական Տնտեսության Խորհուրդ

Հոդ. 63 — ՀՍՀԽ ժողովրդական Կոմիսարների գլուխ կանգնած են ՀՍԽՀ Ժող. Կոմ. Խորհրդի անդամները՝ ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարները։



## ՀԱՏՎԱԾ II-ՐԴ

## ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴԴԻՑ

Հոդ. 32— Յուրաքանչյուր Ժողովրդական Կոմիսարիատին կից կազմվում է կոլլեկգիա, վորի անդամներին հաստատում է Ժողկոմխորհը։

Հոդ. 33.—Ժողկոմիսարն իրավասու է միանձնյա վորոշել հարցերը և գործադրել, իսկ կոլլեգիայի տարաձայնության դեպքում վեճը դրվում է Ժող. Կոմիսարների Խորհրդի քննության

34. Ժող. Կոմիսարները և նրանց կոլլեգիաները պատասխանատու են Ժողկոմխորհի առաջ, իսկ Ժողկոմխորհուրդը Հայաստանի Խորհուրդների Համագումարի և Կենտրոնական Գործադիր Կոմիտեի։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
...Ясникяна
Ա. ՄՅԱՍ...ԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հոդ. 64— Յուրաքանչյուր Ժողովրդական Կոմիսարին առընթեր իր նախագահությամբ կազմվում է կոլլեգիա, վորի անդամներին նշանակում է ՀՍԽՀ Ժողկոմխորհը.

Հոդ. 65 — Ժողկոմիսարն իրավունք ունի միանձնաբար վորոշումներ կայացնել կոմիսարիատի իրավասության վերաբերյալ բոլոր խնդիրների նկատմամբ, այդ մասին տեղեկացնելով կոլլեգիային։

Այն դեպքում, յերբ կոլլեգիան կամ նրա առանձին անդամները համաձայն չեն Կոմիսարի այս կամ այն վորոշմանը, կարող են բողոքել Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին, առանց կասեցնելու վորոշումների կատարումը։

Հոդ. 66— ՀՍԽՀ ժողովրդական Կոմիսարները պատասխանատու են Ժող. Կոմիսարների Խորհրդի, Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և նրա Նախագահության առաջ։

Հոդ. 67. — Ժող. Կոմիսարների կարգադրությունները կարող են կասեցնել և ջնջել Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, նրա Նախագահությունը և Ժողկոմխորհը։

Գրատ. 1900   Տրդատի I-ին տպարան   Պատ. 2433   Տիրաժ 590

ՀՀ Ազգային գրադարան
NL0215094

35.192